

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ թիվ 021958/06

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՄԱՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 19.08.2021թ.-ի թիվ 21958 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 21958 գործը և կից նյութերը,

ՊԱՐՉԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում վարվող անձնական հաշվի քարտի տվյալների՝ «Գ. Ա. Հ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 04425201/ չկատարված հարկային պարտավորությունները 28.06.2021թ-ի դրությամբ կազմել են 556.762 ՀՀ դրամ, որից 448.668 ՀՀ դրամ գումարն առաջացել է 2021թ-ի մայիս ամսվա եկամտային հարկի հաշվարկից:

«Գ. Ա. Հ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Ժորա Գազիկի Ալեքսանյանի /հասցե՝ ք. Վաղարշապատ, Արագածի 2 զնգվ. 12/44, անձն. տվյալներ՝ AR0680054, ՀԾՀ՝ 1608870731/ կողմից 2021թ-ի մայիս ամսվա եկամտային հարկի հաշվարկից առաջացած 448.668 ՀՀ դրամ գումարը ՀՀ Հարկային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի վճարվել, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>3</sup> հոդվածով:

Կողմը պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին՝ չի ներկայացել: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Ժորա Գազիկի Ալեքսանյանի կողմից մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարվել է իրավախախտում, որի համար արդեն ենթարկվել է վարչական տույժի (07.06.2021թ. թիվ 011649/06 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, 244<sup>2</sup>, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>3</sup> հոդվածի՝ Ժորա Գազիկի Ալեքսանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

**Ծանոթություն.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ընդունելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին.

**900005240487՝** վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ

(ստորագրություն)

Ստացա որոշման պատճենը \_\_\_\_\_